ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՄ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Թորոսյան,

ի պատասխան Ձեր 15.09.2025թ. գրության՝ Նանսենի փողոցի հ.1 շենքի 2-րդ մուտքի բնակիչների դիմումի վերաբերյալ, տեղեկացվում է, որ համաձայն «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքի (այսուհետև՝ Օրենք) 6-րդ հոդվածի՝ բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում են շենքը կրող կառուցվածքները, շենքի միջհարկային ծածկերը (առաստաղները, հատակները), նկուղները, ձեղնահարկը, տեխնիկական հարկերը, տանիքը, ինչպես նաև մեկից ավելի շինություններ սպասարկող և բազմաբնակարան շենքի միասնական ամբողջական սպասարկման համար նախատեսված մուտքերը, աստիճանավանդակները, աստիճանները, վերելակները, վերելակային և այլ հորերը, մեխանիկական, էլեկտրական, սանիտարատեխնիկական և այլ սարքավորումներն ու տարածքները, որոնք օրենքով նախատեսված կարգով չեն հանդիսանում այլ անձանց սեփականություն: Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ ընդհանուր բաժնային սեփականության սեփականատերերի պարտականությունը այդ սեփականությունն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով պահպանելն ու շահագործելն է և ընդհանուր բաժնային սեփականության յուրաքանչյուր սեփականատեր պարտավոր է իր բաժնին համաչափորեն մասնակցել պարտադիր նորմերի պահանջների կատարմանն ուղղված ծախսերին, հարկերին, տուրքերին և մյուս վճարներին, ինչպես նաև գույքի պահպանման և շահագործման այլ ծախսերին:

Տեղեկացվում է նաև, որ ՀՀ կառավարության 04.10.2007թ. «Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը սահմանելու մասին» հ.1161-Ն որոշման 2-րդ հավելվածի 7-րդ կետի 4-րդ մասով սահմանված կարգով՝ պարտադիր նորմերի շրջանակներում տանիքներից ջրահեռացնող սարքավորումները (ձագարները, ջրհորդան խողովակները, կախովի ջրհոս ճոռերը և այլ ջրհորդան սարքավորումներ) պետք է ապահովեն շենքի տանիքից ջրի հեռացումը: Պետք է նաև պահպանվի ջրհորդան խողովակների նորմատիվային ուղղաձգությունը և հորիզոնական մասերի թեքությունը, նրանց առանձին օղակների միացման խտությունը:

Պարտադիր նորմերի կատարումը պետք է իրականացվի շենքի կառավարման մարմնի՝ համատիրության կողմից:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից գրություն է ուղարկվել նշված շենքի կառավարման մարմնին՝ «Նոր

Նորք 1/5» համատիրության նախագահին, որով տեղեկացվել է բնակիչների կողմից բարձրացված խնդրի մասին և այն մասին, որ վարչական շրջանը պատրաստակամ է Նանսենի փող. հ.1 շենքի 2-րդ մուտքի տանիքից ջրահեռացման համակարգը նորոգելու համար տրամադրել համապատասխան քանակով ջրթափ խողովակներ՝ նորոգման աշխատանքները համատիրության միջոցներով իրականացնելու նախապայմանով: Տեղեկացվել է նաև, որ ջրթափ խողովակները ստանալու համար անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան դիմում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ